



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 13 ՓԵՏՐՈՒԿ, 2017

### ՏԵՐՈՒՍԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 41


ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՊԱՀԱՊԱՆԸ

Երանի անոր, որ թշուառին հոգ կը տանի.  
նեղութեան ժամանակ Տէրը զայն պիտի ազատէ:  
Տէրը պիտի պահպանէ զայն, անոր կեանքը պիտի երկարէ,  
զայն երանելի պիտի դարձնէ այս աշխարհի մէջ,  
եւ զայն պիտի չձգէ թշնամիներու փմահանոյքին:  
Տէրը պիտի օգնէ անոր, հիւանդ պառկած ժամանակ,  
եւ իր հիւանդութենէն զինք պիտի ապաքինէ:  
Բայց դուն արդէն զիս կ'ընդունիս՝ անմեղութեանս համար,  
եւ յաւիտեան զիս կը պահես քու ներկայութեանդ մէջ:  
Օրհնեալ է Տէրը, Աստուածը իր ժողովուրդին,  
յաւիտեանէ մինչեւ յաւիտեանս: Ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղերոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հոգանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

**ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ**  
  
**ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ**  
**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ**  
2:14-26  
\*\*\*\*\*

**ԱՆԱՉԱՌ ԸՈՒՄ ԲՈՒՈՐԻՆ ՀԱՆԴԵՂ (2:14-26)**

Յակոբոս Առաքեալ ներկայացնել է յետոյ, թէ քրիստոնէայ անհապը ինչպէս պէտք է ապրի իր հաւաքքի կենսաքը, ու մանաւանդ՝ դաստիարակութեան օրն ալ Աստուծոյ ողորմութիւնն է որ պիտի յաղթանակէ, կ'անցնի յաջորդ բաժնին խօսելու եւ ներկայացնելու թէ բաւարար չէ միայն հաւաքալ կամ ըսել թէ հաւաքը ունինք, եթէ երբեք այդ հաւաքքին պիտի չ'ընկերանայ հաւաքքին արտայայտութիւնը եղող գործերը:

Ընդհանրապէս այս նիւթը խնդրոյ առարկայ դարձած է երբ զայն կը համեմատենք Պօղոս Առաքեալի այն խօսքին որ կ'ըսէ. «Մարդ հաւաքքով կ'արդարանայ» (Հռոմ 3:28): Կարծէք հակասական է Յակոբոս Առաքեալի ըսածին: Բայց խորքին մէջ ոչ: Որովհետեւ երկուքի ալ պարագային յստակ բացատրութիւն մըն է որ կը տրուի: Երբ հաստատուած ամբողջութեամբ կը կարդանք, ապա կը տեսնենք, որ Պօղոս Առաքեալի բացատրութեան մէջ արդարացումի մասին է խօսքը, ուր այդ արդարացումը տեղի կ'ունենայ Աստուծոյ կողմէ տրուած ձրի պարգեւով, եւ ոչ թէ մարդոց Օրէնքի կատարումով: Այո, Օրէնքը տրուեցաւ, որպէս խնամակալ դաստիարակ, ինչպէս դարձեալ պիտի ըսէ Պօղոս Առաքեալ, բայց այդ Օրէնքով կարելի չէր արդարանալ, որովհետեւ բոլորն ալ մեղքի տակ ինկան: Իսկ Յակոբոս Առաքեալի նամակին մէջ, ան կ'անդրադառնայ հաւաքքի արտայայտութիւնը եղող գործերու մասին, որ կարելի չէ հաւաքը ունենալ, ան ալ կրաւորական հաւաքը, պարզապէս ըսելու թէ կը հաւաքամ: Այդպիսի հաւաքը Առաքեալը կը կոչէ մեռած հաւաքը:

Զնոնանք հետեւեալ իրողութիւնը, որ նախ հաւաքը ըսելով ի՞նչ կը հասկնանք կամ ի՞նչ կը նշանակէ: Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Հաւաքը՝ կը նշանակէ վստահ ըլլալ այն բաներուն՝ որոնց կը յուսանք, եւ համոզուած ըլլալ այն բաներուն՝ որոնք չեն երեւիր» (Եբր 11:1): Տակաւին, հաւաքը ըսելով, Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Հաւաքքը ծնունդ կ'առնէ քարոզութիւնը լսելէն. իսկ քարոզութիւնը հաւաքք կ'արթնցնէ՝ երբ Քրիստոսի խօսքերն են որ կը քարոզուին» (Հռոմ 10:17): Իսկ այս բոլորը մեզի կը տրուին Սուրբ Հոգիին կողմէ որպէս պարգեւ, երբ դարձեալ Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Ամենակարեւոր պարգեւներն են՝ հաւաքք, յոյս եւ սէր» ( Ա Կորնթ 13:13): Ուրեմն, պարզ տրամաբանութեամբ, եթէ Սուրբ Հոգիին պարգեւն է հաւաքքը, նոյն այդ Սուրբ Հոգիին նաեւ իմ մէջ կը գործէ համապատասխան պտուղ տալով, որ դարձեալ Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Սուրբ Հոգիին պտուղներն են՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, ազնւութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն» (Գաղ 5:22-24): Ուրեմն Յակոբոս Առաքեալի ըսածը հակասութիւն չէ, այլ՝ ամբողջացում, առաւել եւս Քրիստոսի խօսքին վերահաստատումը, երբ կ'ըսէ. «Ես եմ ճշմարիտ որթատունկը, եւ Հայրս մշակն է: Անիկա կը կտրէ վրաս հաստատուած բոլոր այն ճիւղերը որոնք պտուղ չն տար, իսկ բոլոր անոնք որոնք պտուղ կու տան՝ յօտելով կը մաքրէ, որպէսզի աւելի պտղաբեր ըլլան» (Յովհ 15:2):

Ամենակարեւոր հաստատումը, որ Քրիստոս կատարեց. «Որովհետեւ անօթի էի եւ գիս կերակրեցիք, ծարաւ էի եւ ջուր տուիք, օտարական էի եւ ընդունեցիք գիս, մերկ էի եւ հագցուցիք ինձի, հիւանդ էի եւ հոգ տարիք ինձի, բանտի մէջ էի եւ այցելեցիք ինձի: Այս բոլորը ե՛րբ ըրինք. որովհետեւ իմ այս փոքր եղբայրներէս մէկուն ըրիք, ինձի ըրած եղած» (Մատթ 25:35-40):